

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք, 1995-1999» ժողովածուն ԼՂՀ վիճակագրության, պետոռեգիստրի և վերլուծության պետվարչության առավել ամբողջական վիճակագրական հրատարակումն է, որն արտացոլում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը:

Ժողովածուում ընդգրկված տվյալներն արտացոլում են 1995-1999թթ. ԼՂՀ սոցիալ-տնտեսական իրավիճակի ամբողջական պատկերը: Ներկայացված մոտ 180 աղյուսակները բնութագրում են տնտեսությունում, դրա կարևորագույն ճյուղերում, սոցիալ-մշակութային ոլորտի առանձին հատվածներում տիրող իրավիճակը և զարգացման միտումները:

Տվյալները հաշվարկված են վիճակագրության արդի՝ միջազգային պրակտիկայում ընդունված մեթոդաբանության սկզբունքներին համապատասխան, ինչը հնարավորություն է ընձեռում ցուցանիշների միջազգային համադրումների:

Տարեգիրքը նախատեսված է տեղեկատվության սպառողների լայն շրջանի համար՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների, գիտակրթական հաստատությունների, հասարակական և միջազգային կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների, ֆինանսավարկային կազմակերպությունների ու այլ տնտեսավարող սուբյեկտների, ինչպես նաև այն սպառողների համար, ում անհրաժեշտ է մանրամասնված վիճակագրական տեղեկատվություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ:

Բ. Բաբայան

ԼՂՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության պետական վարչության պետ